ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 փետրվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

23
(2689)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՐԵՔ ՍՑԵՆԱՐ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Արայիկ Հարությունյանի՝սահմանադրական բարեփոխումների նախագիծը իսկական ածիոտաժ է առաջացրել Արցախի քաղաքական եւ հասարակական դաշտում: «Ժողովուրդ» օրաթերթի արցախյան աղբյուրները հայտնեցին, որ Արցախում գրեթե բոլորը տարակուսած են Հարությունյանի այսչափ շտապողականությունից, վստահ են՝նա հենց այնպես նման քայլի չէր գնա առանց քաղաքական դրդապատճառների, բայց թե ինչ է կատարվում իրականում, դեռ չեն կարողանում հասկանալ: Այսպիսով, Արցախի նախագահի առաջարկած փոփոխությունը իրենից ենթադրում է հետեւյալը. ֆորսմաժորային իրավիճակներում, այն է՝երբ օրինակ նախագահը անսպասելի հրաժարական է տալիս, մահանում է կամ, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, այլեւս ի վիճակի չէ պաշտոնավարել, նախագահ ընտրելու լիազորություն կտրվի խորհրդարանին: Ընդգծենք, որ սա չի վերաբերում նախագահի հերթական ընտրություններին. այս դեպքում նախագահին, Սահմանադրությամբ նախատեսված կարգով, ընտրելու է ժողովուրդը: Նկատենք, որ սահմանադրական փոփոխությունների մի փաթեթ էլ դեռեւս 2022թ.-ին մշակել էին նաեւ Արցախի ԱԺ 5 խմբակցությունները միասին, որը, սակայն, դեռ խորհրդարան չի ներկայացվել: Արցախի ԱԺ խմբակցությունների հեղինակած այս նախագծով եւս, ի թիվս Սահմանադրական մի շարք բարեփոխումների, նախատեսվում էր նաեւ խորհրդարանին նախագահ ընտրելու լիազորություն տալը: Արայիկ Հարությունյանը, չգիտես՝ինչու, առաջ է ընկել, այդ փաթեթից առանձնացրել է նախագահի ընտրություններին առնչվող այս դրույթը եւ արագացված կերպով այն ներկայացրել է խորհրդարանին: Սահմանադրական փոփոխությունների այս նախագիծը նախ պետք է ուղարկվի Արցախի գերագույն դատարան, որի հաստատմանն արժանանալուց հետո այն նորից պետք է վերադառնա Արցախի ԱԺ՝ Պետահիրավական հանձնաժողով: Եթե ԱՀ գերագույն դատարանը չհաստատի նախագիծը, այն կճանաչվի հակասահմանադրական եւ դուրս կգա շրջանառությունից Գերագույն դատարանում եւ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում հաստատվելուց հետո միայն նախագիծը կմտնի լիագումար նիստերի օրակարգ: Սահմանադրական փոփոխությունների նախագիծը կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ով (22 պատգամավոր): Հաշվի առնելով, որ Արայիկ Հարությունյանի՝ «ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔ-ՔՄԴ»-ն խորհրդարանում ունի 16 պատգամավոր՝ստացվում է, որ նախագիծը անցկացնելու համար անհրաժեշտ կլինի հավելյալ 4 ձայն: Արցախում վստահ են, որ Սամվել Բաբայանի թիմակիցները՝ «Միասնական Հայաստան» խմբակցության պատգամավորները, անհրաժեշտության դեպքում օգնության կհասնեն Հարությունյանին եւ կապահովեն անհրաժեշտ ձայներ նախագիծն անցկացնելու համար:Այսպիսով, նախագիծն արդեն ընդունվելուց հետո ֆորսմաժորային իրավիճակներում Արցախ ԱԺ խմբակցություններից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա առաջադրելու նախագահի իր թեկնածուին, իսկ նախագահը խորհրդարանում կընտրվի կրկին պատգամավորների 2/3-ի ձայներով: Արցախում բոլորն այն համոզմանն են, որ Արայիկ Հարությունյանը նման նախաձեռնություն է սկսել Նիկոլ Փաշինյանի պատվերով: Այնտեղի քաղաքական դաշտում մի քանի սցենարներ են շրջանառվում՝ սրա հետ կապված՝ առաջին՝ Հարությունյանը անվտանգային գերլարված իրավիճակում քաղաքական նման նախաձեռնություն է սկսել, որպեսզի հանրության ուշադրությունը շեղի կարեւոր հարցերից: Շրջանառվող երկրորդ սցենարն էլ հետեւյալն է. Արայիկ Հարությունյանը փորձելու է օգտագործել իր հրաժարականի թեման Ռուբեն Վարդանյանի վրա ճնշում գործադրելու եւ վերջինիս պաշտոնանկությանը հասնելու համար: Ինչպես հիշում ենք, նախագահի հնարավոր հրաժարականի մասին խոսակցություններ կային նաեւ հունվարի 14-ին ու 15-ին, երբ Հարությունյանի ու Վարդանյանի կոնֆլիկտը հրապարակային դաշտ դուրս եկավ: Խորհրդարանին նախագահ ընտրելու լիազորություններով օժտելը հրաժարականի սպառնալիքը ավելի իրատեսական է դարձնում: Արայիկ Հարությունյանը կարող է իրոք հրաժարական տալ, սակայն Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող իր խմբակցության միջոցով նախագահի պաշտոնում ընտրել իր լոյալ թիմակիցներից մեկին՝պահպանելով իշխանական որոշակի լծակներ: Հավանական է նաեւ, որ Հարությունյանը իրոք հակված է հեռանալ քաղաքականությունից եւ այս փոփոխության միջոցով ցանկանում է այդ որոշումը կյանքի կոչելու համար սահմանադրական մեխանիզմ ստեղծել:

Փետրվարի 7-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանին ներկայացվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի 2022 թ. գործունեության հաշվետվությունը: Այդ ժամանակ մամուլի հաղորդագրություն տարածվեց նախորդ տարվա կոմիտեի գործունեության մի քանի ցուցանիշների մասին: Մասնավորապես, ըստ հաղորդագրության՝ վարձակալության տրված պետական գույքի դիմաց 2022 թվականին հավաքագրվել եւ պետբյուջե է վճարվել 11 մլրդ դրամ, 2021-ի համեմատ՝ 200%-ով ավելի: Ավելի ուշ, սակայն, վարչապետի պաշտոնական կայքում վերոհիշյալ մամուլի հաղորդագրությունը ենթարկվել է փոփոխությունների. խմբագրված տարբերակում փոփոխվել է վարձակալության տրված գույքի դիմաց հավաքագրված գումարների թիվը՝ 11 մլրդ դրամից դառնալով 470 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ 200% աճի վերաբերյալ համեմատությունը թողնվել է անփոփոխ: Փաստերի ստուգման հարթակը նկատել է, որ ո՛չ կոմիտեն եւ ո՛չ էլ վարչապետի աշխատակազմը որեւէ կերպ չեն տեղեկացրել վարձակալությունից ստացված մուտքերի վերաբերյալ մամուլի հաղորդագրությունում արված էական փոփոխությունների մասին: Ավելին՝ Պետգույքի կառավարման կոմիտեն հաղորդագրությունը տարածելու հաջորդ օրը՝ փետրվարի 8-ին, իր ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակել է վարչապետին ներկայացված հաշվետվության մասին «Լուրերի» պատրաստած ռեպորտաժը, որում վարձակալության դիմաց բյուջե արված մուտքերի վերաբերյալ նշվում է ոչ թե խմբագրված 470 մլն թիվը, այլ 11 միլիարդը: Ավելին, 11 մլրդ դրամը ոչ թե գույքի վարձակալությունից, այլ անշարժ գույքի օտարումից պետբյուջե մուտքագրված գումարն է: Ահա այսպես են մանիպուլացնում հասարակությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2023 թվականի՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Արտակարգ իրավիճակների նախարարությանը կհատկացվի 157 մլն 816 հազար դրամ: Տեղեկացանք, որ այդ գումարը տրամադրվելու է Թուրքիայի եւ Սիրիայի երկրաշարժից տուժածներին սնունդ եւ անկողնային պարագաներ տրամադրելու նպատակով: Նկատենք՝ փետրվարի 6-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը Թուրքիայում խլել է 41 հազարից ավելի մարդու կյանք, Սիրիայում՝ 5 հազարից ավելի: Ավերիչ երկրաշարժերից հետո Հայաստանի կողմից երկու անգամ Թուրքիա մարդասիրական օգնություն է ուղարկվել: Այն հնարավորություն է եղել իրականացնել 1993 թվականից փակված Մարգարայի կամրջով: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ զբաղվող իշխանության անդամները նախորդ տարվա դեկտեմբերին երկու անգամ հանդիպում են ունեցել հենց Մարգարայի կամրջի մոտ, ուսումնասիրել կամրջի վիճակը, անգամ նմուշառում անցկացրել եւ եկել այն եզրակացության, որ այն պիտանի է: Երեկ էլ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն է Թուրքիա մեկնել, հանդիպումներ ունեցել եւ այցելել նաեւ այնտեղ ծառայություն իրականացնող հայ փրկարարներին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կարվեն: Մասնավորապես, Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինն ունենալու է նոր գործառույթներ: Այսպես, հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այն խախտումների դեպքում, որոնք անմիջականորեն եւ ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման եւ մարդկանց անվտանգության համար, մարմինը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել կազմակերպությունների, արտադրական տեղամասերի, առանձին ագրեգատների աշխատանքը, ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները եւ ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել շենքերի, շինությունների եւ այլ օբյեկտների շահագործումը: Հրդեհային անվտանգության պահանջների խախտման համար տեսչական մարմինը, օրենսդրությամբ սահմանված կարգով, կիրառելու է պատասխանատվության միջոցներ: Միեւնույն ժամանակ, տեսչական մարմնի ղեկավարի կողմից ընդունվող վարչական ակտի հիման վրա, նրանք կարող են կապարակնքել (կնքել) առանձին ագրեգատ, շենք, շինություն կամ այլ օբյեկտ: Հավելենք, որ այս նախագիծը վարչապետի աշխատակազմի կողմից երեկ ներկայացվել է հանրային քննարկման: Թերեւս սա պայմանավորված է վերջին շրջանի հրդեհներով, որոնք առաջանում են վատ կառավարման եւ կանոնները չպահպանելու հետեւանքով:

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ Է

ՊԵՏՔ Է ԶՈՒՍՊ ԼԻՆԵԻՆ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը երեկ մեկնել է Թուրքիա: Անկարայում Հայաստանի արտգործնախարարը հանդիպել է Թուրքիայի իր պատճառնակցի՝ Մեւլութ Չավուշօղլուի հետ: Ինչպես համատեղ ասուլիսի ժամանակ հայտարարել է Արարատ Միրզոյանը, երկու երկրները պայմանավորվել են համատեղ ջանքերով վերանորոգել Անիի կամուրջը, ինչպես նաեւ շարունակել աշխատանքը՝ հայ-թուրքական սահմանի ամբողջական բացման ուղղությամբ:

ՀՀ ԱԳ նախարարի գլխավորած պատվիրակության կազմում է նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման բանակցություններում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը: Արարատ Միրզոյանի այցը նպատակ ունի ցույց տալ Հայաստանի աջակցությունը փետրվարի 6-ի ավերիչ երկրաշարժից մեծամասշտաբ վնասներ կրած Թուրքիային: Հայաստանը երեկ Թուրքիա է ուղարկել նաեւ մարդասիրական օգնության երրորդ խմբաքանակը, մարդասիրական օգնություն տեղափոխող բեռնատարները Մարգարայի կամրջով հատել են սահմանը, որը փակ է արդեն շուրջ 30 տարի:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի հետ: Վերջինս մեզ հետ զրույցում նշեց, որ իր համար անհասկանալի է Հայաստանի իշխանությունների՝ չափից ավելի ակտիվությունն այս հարցում. փորձագետը կարծում է՝ Հայաստանի իշխանությունները պետք է զուսպ լինեին:

-Պարոն Մելքոնյան, մեր իշխանությունները վստահ են, որ իրենց այս հումանիտար քայլերը դրական ազդեցություն կունենան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա: Դուք ի՞նչ կասեք, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի իշխանությունների այս քայլերը:

-Թուրքիայում, իսկապես, մեծ ծավալի աղետ է տեղի ունեցել. բնական է, որ Հայաստանը պետք է, դիվանագիտական արարողակարգից ելնելով, որոշակի քայլեր աներ, ուղղակի հայկական կողմի՝ չափից ավելի ակտիվությունը, երբ իրար հերթ չտալով Հայաստանի նախագահը, վարչապետը, ԱԺ նախագահը ցավակցում են եւ այդ հարցն ուշադրության կենտրոնում են պահում, բերում է հետեւյալ հարցին՝ մի՞թե մոռացել են, որ Թուրքիան մի երկիր է, որը մեր նկատմամբ տասնամյակներով թշնամական քաղաքականություն է վարել, որն ուղիղ մասնակցություն ունի արցախյան պատերազմին, եւ որն իր բացասական քաղաքականությունը Արցախի եւ Հայաստանի հանդեպ չի թաքցնում, կոնկրետ այս պահին էլ մասնակցում է Լաչինի միջանցքի շրջափակման եւ 120 հազար արցախցիների՝ աղետի շեմին հասցնելու գործին: Եթե այս ամենը մոռանում ենք եւ հարցը դիտարկում ենք միայն զգացական մակարդակում, ապա դա սխալ է: Ինձ համար երկու բան մնում է անհասկանալի՝ Հայաստանի իշխանությունների՝ չափից ավելի ակտիվությունը այս հարցում (կարծում եմ, պետք է ավելի զուսպ լինեին նրանք), անհասկանալի է նաեւ Հայաստանի իշխանությունների քողարկված հույսը, թե իրենց այս քայլերի արդյունքում կարող են դրական տեղաշարժեր լինեն հայ-թուրքական հարաբերություններում: Ես իրենց այս լավատեսությունը համարում եմ կասկածելի, որովհետեւ հույս ունենալ, որ, ցավակցությունների եւ հումանիտար օգնությունների շնորհիվ, Թուրքիան փոխելու է իր քաղաքականությունը, դա, կարծում եմ, փոքր-ինչ միամտություն է: Եկեք չմոռանանք, որ այլ տիպի աղետ է նաեւ Արցախում, որի պատճառը նաեւ Թուրքիան է: Եթե Հայաստանն այդքան ակտիվ քայլեր է անում եւ ակնկալում է համարժեք քայլեր, ապա մի քանի օր առաջ, իբրեւ բարի կամքի դրսեւորում, Թուրքիան եւ իր կրտսեր գործընկեր՝ Ադրբեջանը, պետք է որ բացած լինեին Բերձորի միջանցքը. հենց այն նույն պահին, երբ հայկական բեռնատարը հումանիտար օգնությամբ հատում էր հայ-թուրքական սահմանը, որպես բարի կամքի դրսեւորում, Ադրեջանը անջատում էր Արցախ գնացող գազի խողովակը, այնպես որ, այս ամենն ինձ վրա թողնում է ջայլամային քաղաքականության տպավորություն: Կտեսնենք՝ առաջիկայում որեւէ արդյունք կլինի, թե ոչ, բայց զուսպ լինելը այս հարցում ամենակարեւորն էր, որ այս իշխանությունները պետք է դրսեւորեին, քանի որ հարցը վերաբերում է շատ զգայուն խնդրի, որը միաշերտ չէ, բազմակողմանի է, քաղաքական հիշողության պակասով պետք չէ տառապել:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓԱԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԱՆՐԱՄԱՍԵՐ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը փետրվարի 14-ին ՔՊ գրասենյակում հանդիպել է կուսակիցների հետ: Ըստ կուսակցության տարածած պատշգամբային հաղորդագրության՝ քննարկվել են առաջիկա ՏԻՄ ընտրությունների հետ կապված մի շարք հարցեր:

ArmLur.am-ին նոր մանրամասներ են հայտնի դարձել Փաշինյանի եւ կուսակիցների փակ քննարկումից:

Տեղեկացանք, որ հանդիպման օրակարգում հիմնականում եղել են հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված հարցերը: Նիկոլ Փաշինյանը ներկայացրել է՝ թե ինչ փուլում են բանակցությունները, ինչի շուրջ է բանակցում Հայաստանը:

ՔՊ-ականները Փաշինյանի հետ քննարկել են, մասնավորապես, Ադրբեջանի վերջերս փոխանցած առաջարկները՝ խաղաղության պայմանագրի տեքստի հետ կապված, Փաշինյանից հետաքրքրվել են՝ ինչ դիրքորոշում ունի նա՝ սրա հետ կապված, ՔՊ-ականները նաեւ իրենց տեսակետներն են հայտնել:

Նիկոլ Փաշինյանն էլ թիմակիցներին ասել է, որ հնարավորինս շուտ պետք է ավարտին հասցնել Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրումը, ինչպես նաեւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը:

ՔՊ-ականները այս առումով մեծ ակնկալիքներ ունեն հատկապես Արարատ Միրզոյանի՝ Թուրքիայի կատարած այսօրվա այցից:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ՈՐԴԻՆ ՓԱԿԱԳԾԵՐ Է ԲԱՑՈՒՄ

ԱԺ նախկին ատգամավոր Վերսանդիկ Հակոբյանի որդին նոր մանրամասներ է ներկայացնում Հրայր Հակոբյանի եւ իրենց ունեցած վեճի մասին:

Այս տարվա հունվարի 31-ին ԱԺ նախկին պատգամավոր Վերսանդ Հակոբյանի որդին՝Կարեն Հակոբյանը, դատական հայց էր ներկայացրել Երեւանի Շամպայն-գինիների գործարանի կառավարմամբ զբաղվող հորեղբոր՝Հրայր Հակոբյանի դեմ: «Ժողովուրդ» օրաթերթը դատական տեղեկատվական համակարգից տեղեկացավ, որ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին Վերսանդիկ Հակոբյանի որդին՝Կարեն Հակոբյանը, քաղաքացիական դատարանում հորեղբոր դեմ հայց է ներկայացրել՝ պահանջելով, որ ժառանգական գույք (շինություններ, ունեցվածք, բիզնես եւ այլն) ճանաչեն որպես այդպիսին: Նկատենք, որ դատարանը գործն ընդունել է վարույթ: Դատելով իրավիճակից՝ ԱԺ նախկին պատգամավորի մահվանից հետո վերջինիս որդիները իրենց հոր ժառանգության խնդրով բախվել են հորեղբոր հետ, բանավոր կերպով չեն կարողացել հասնել արդարության եւ հասել են դատարան:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել էր նաեւ Հրայր Հակոբյանի հետ՝ հասկանալու համար, թե նա ինչ խնդիրներ ունի իր եղբոր որդիների հետ, որ գործը հասել է դատարան: Ի պատասխան՝ Հրայր Հակոբյանն ասաց. «Դրանում որեւէ բան չկա, ժառանգության հետ կապված: Օրն եկել է, ամեն ինչ ընթացքով կլուծվի: Կռիվ-մռիվ չէ, իրար չենք խփում, որեւէ խնդիր չունենք. եթե լինի, Ձեզ տեղյակ կպահենք»: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթին չհաջողվեց գտնել ԱԺ նախկին պատգամավորի որդուն՝Կարեն Հակոբյանին, որ անձամբ էր հոր ժառանգության հարցով դիմել է դատարան, սակայն կարողացանք գտնել ԱԺ նախկին պատգամավորի մյուս որդուն՝Արմեն Հակոբյանին, եւ խնդրեցինք, որ նա մեկնաբանի, թե ինչու է եղբայրը դատի տվել հորեղբորը: Ի պատասխան մեր հարցադրմանը՝ԱԺ նախկին պատգամավորի որդի Արմեն Հակոբյանը հայտնեց. «Նախ ուզում եմ ասել, որ ազնիվ ժուռնալիստիկան ենթադրում է փաստերի երկկողմանի ներկայացում եւ ոչ թե մի կողմի հայտարարություններն որպես հիմք ընդունելը: Բայց վստահեցնում եմ Ձեզ, որ դա էլ անհետեւանք չի մնա: Մեր հորեղբոր՝ սպառնալիքներ պարունակող հայտարարությունները չեմ պատրաստվում մեկնաբանել: Մենք ապրում ենք ժողովրդավար երկրում եւ մտադրված ենք մեր շահերն ու իրավունքները պաշտպանել համապատասխան ատյաններում: Ես կնշեմ ընդամենը, որ Հրայր Հակոբյանը մեր հոր մահից մի քանի ամիս անց, առանց մեզ տեղեկացնելու, վաճառել է 90-ականներից Հակոբյանների ընտանիքի սիմվոլ դարձած «Ոսկե Ձկնիկ» ռեստորանային համալիրը: Հասարակությունը լավ գիտի, որ հայրս եւ իր եղբայրը միասին են հիմնել իրենց բիզնեսները, հետեւաբար աբսուրդային իրավաճակի մեջ ենք հայտնվել: Փաստացի ո՛չ միայն զրկվեցինք գույքից, այլեւ անտեսվեցին մեր հոր՝Վերսանդ Հակոբյանի ահռելի ներդրումն ու ջանքերը: Այսքանը»:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Իրավիճակը Թուրքիայում բավականին լարված է, դժգոհությունը մեծ է: Թուրքիայում երկրաշարժի զոհերի թիվը գերազանցել է 35 հազար 400-ը:

Այս երկրաշարժից հետո քաղաքական շրջանակներից կարծիքներ են հնչել, թե պետք է հետաձգել մայիսի 14-ին նշանակված նախագահական եւ խորհրդարանական ընտրությունները:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը, սակայն, երկրաշարժից հետո ընտրությունների թեմային դեռ չի անդրադարձել: Ավելի վաղ հենց ինքն էր հայտարարել խորհրդարանական ու նախագահական ընտրությունները միասին անցկացնելու մասին, ընդ որում՝ նախատեսված ժամկետից ավելի շուտ՝ մայիսի 14-ին: Դրանք նշանակված էին հունիսի 18-ին:

Էրդողանի թիմն այդ ժամանակ սա բացատրեց այն հանգամանքով, որ հունիսին ընտրությունները կհամընկնեն ամառային արձակուրդների շրջանի հետ, եւ պետք է ավելի վաղ կազմակերպել: Թուրքիայի քաղաքական շրջանակներում տարաձայնություններ են, եւ ընդդիմադիրները պնդում են՝ այժմ հնարավոր չէ ընտրությունները հետաձգել ավելի ուշ, քան հունիսի 18-ը, քանզի գործող օրենքով միայն պատերազմի դեպքում կարող են ընտրությունները հետաձգվել:

ՆԱԽԱՐԱՐԸ ԿՄԵԿՆԻ ԱԲՈՒ ԴԱԲԻ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը փետրվարի 18-25-ը մեկնելու է Արաբական Միացյալ Էմիրություններ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում, նախարարից բացի, ընդգրկված են նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը, Ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահը, նախարարի խորհրդականն ու շուկայի զարգացման վարչության առեւտրի խթանման բաժնի գլխավոր մասնագետը: Ընդ որում, ամենաերկար ժամանակով Արաբական Միացյալ Էմիրություններում մնալու է հենց բաժնի գլխավոր մասնագետը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հայկական պատվիրակությունն Աբու Դաբիում մասնակցելու է IDEX 2023 միջոցառմանը: Մենք տեղեկացանք, որ Ռոբերտ Խաչատրյանի, Գեւորգ Մանթաշյանի, Արտյոմ Մեհրաբյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղման օրապահիկը եւ ճանապարհածախսը եւ Սարգիս Խաչատրյանի, Տաթեւիկ Սողոմոնյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղման բոլոր ծախսերը կատարվելու են 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

Ռոբերտ Խաչատրյանի, Գեւորգ Մանթաշյանի եւ Արտյոմ Մեհրաբյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղման գիշերավարձի ծախսը կատարվելու է հրավիրող կողմի միջոցների հաշվին: Ծառայողական գործուղման մեկնած անձանց գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է 2005 թվականի որոշմամբ:

ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով Թուրքիայում է, որտեղ նաեւ հանդիպել է այդ երկրի ԱԳ նախարար Մեւլութ Չավուշօղլուին: Նրանք հանդես են եկել համատեղ հայտարարություններով եւ վերահաստատել Թուրքիայի հետ հարաբերությունների ամբողջական կարգավորման Հայաստանի պատրաստակամությունը:

ArmLur.am-ը համառոտ կներկայացնի, թե նորանկախ Հայաստանի պատմության մեջ ինչ ընթացք են ունեցել հայ-թուրքական հարաբերությունները, եւ ինչ փոխայցեր են եղել: 1990-ականներին առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարում էր, որ առանց որեւէ քաղաքական զիջման եւ առանց նախապայմանների պետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: 1991թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան ճանաչում է Հայաստանի անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվում:

1995 թ. հոկտեմբերին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Նյու Յորքում էր, որտեղ մասնակցում էր ՄԱԿ-ի հիսունամյակին նվիրված հոբելյանական հավաքին: Հոկտեմբերի 23-ին Նյու Յորքում Տեր-Պետրոսյանը հանդիպեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ: Հայաստանի անկախացումից հետո դա Հայաստանի ու Թուրքիայի նախագահների առաջին հանդիպումն էր: Մինչ այդ՝ 1993թ. ապրիլին, Տեր-Պետրոսյանը Թուրքիայում մասնակցել էր Թուրգութ Օզալի թաղման արարողությանը:

ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանը վերհիշում է. «1993թ. Թուրքիան արդեն ամբողջովին փակել էր սահմանը Հայաստանի հետ, իսկ 1994թ. մայիսին զինադադար էր հաստատվել Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ, սակայն իրավիճակը ռազմաճակատում շարունակում էր լարված մնալ: Լարված մթնոլորտ էր նաեւ Տեր-Պետրոսյան-Դեմիրել հանդիպման առաջին իսկ պահից: Լեւոն Տեր-Պետրոսյանը, գործի դնելով թուրքերենի իր իմացությունը, մի քանի բառ փոխանակեց Դեմիրելի հետ՝ որոշակիորեն փոխելով մթնոլորտը, սակայն երբ սկսվեցին քննարկումները բուն թեմայի շուրջ, լարվածությունը գնալով աճեց»:

1998 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարական է տալիս: Հաջորդող տարիներին նա շարունակում էր հանդես գալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման օգտին:

1998 թվականին Ռոբերտ Քոչարյանի՝նախագահ դառնալուց հետո Հայաստանի եւ Թուրքիայի նախագահները հանդիպել են երկու անգամ: Առաջինը տեղի ունեցավ 1998թ. հունիսի 5-ին Յալթայում՝ Սեւծովյան տնտեսական համագործակցության գագաթաժողովի ընթացքում, իսկ երկրորդը՝ 1999թ. նոյեմբերին Ստամբուլում, ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ: Այս երկու հանդիպումները ոչնչով չէին տարբերվում Տեր-Պետրոսյան-Դեմիրել հանդիպումից. չէին փոխվել ո՛չ Դեմիրելի մտածելակերպը, ոճն ու մոտեցումները, ո՛չ էլ հայկական կողմի պատասխանները:

Այդ ընթացքում նախկին նախարար Օսկանյանը կրկին հանդիպումներ է ունեցել իր թուրք գործընկերների, հիմնականում՝ արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմի հետ: «Այս հանդիպումներին եւս նշույլ անգամ չկար, որ Թուրքիան ցանկություն ունի հայաստանի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել կամ բացել սահմանը. թուրքերն այդ ամենը կապում էին միայն ու միայն Ղարաբաղի հարցի հետ: 2002թ. Թուրքիայում իշխանափոխություն տեղի ունեցավ. խորհրդարանական ընտրություններում հաղթեց Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորած «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը: Սկզբնական շրջանում Աբդուլլահ Գյուլը նշանակվեց վարչապետ, իսկ որոշ ժամանակ անց, երբ հանվեցին Էրդողանի նկատմամբ առկա իրավական սահմանափակումները, Գյուլը նշանակվեց արտաքին գործերի նախարար, իսկ Էրդողանը ստանձնեց վարչապետի պաշտոնը»-վերհիշում է Վարդան Օսկանյանը:

Սերժ Սարգսյանի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո հայ-թուրքական հարաբերություններում շարժ է նկատվում: Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը շնորհավորում է Սերժ Սարգսյանին նախագահական ընտրություններում հաղթանակ տանելու կապակցությամբ: Սարգսյանը Թուրքիայի նախագահին հրավիրում է Հայաստան՝ սեպտեմբերի 6-ին դիտելու աշխարհի առաջնության Հայաստանի եւ Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների ընտրական հանդիպումը: 2008 թ. սեպտեմբերի 6-ին Աբդուլա Գյուլը ժամանում է Երեւան:

Հասարակության մի խոշոր հատված դեմ էր Գյուլի այցին եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը: Թե՛ օդանավակայանում, թե՛ Երեւանի փողոցներում, որտեղով պետք է անցներ Գյուլի մեքենան, հավաքվել էին հազարավոր հայեր. նրանք իրենց ձեռքերում պահում էին «Ես Կարսից եմ», «Ես Արդահանից եմ», «Ես Վանից եմ», «Ես Իգդիրից եմ» գրառումներով պաստառներ:

2009 թ. հունվարի 29-ին Դավոսում Սերժ Սարգսյանի եւ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջեւ կայանում է 20 րոպե տեւողությամբ հանդիպում:

2009 թ. հոկտեմբերի 10-ի երեկոյան Հայաստանի ու Թուրքիայի արտգործնախարարները Շվեյցարիայի, ինչպես նաեւ Մինսկի խմբի եռանախագահող պետությունների արտգործնախարարների ու եվրոպացի բարձրաստիճան այլ դիվանագետների ներկայությամբ ստորագրում են հայ-թուրքական երկու արձանագրությունները: Հետագայում, սակայն, թուրքական կողմը ձգձգում է արձանագրությունների վավերացումը՝ առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառաբանությամբ: Արդեն 2014 թվականին ՄԱԿ-ի ամբիոնից Սերժ Սարգսյանը կոշտ ելույթով հանդես եկավ՝ «գրողի ծոցը ուղարկելով արձանագրությունները»: 2015 թվականին Սարգսյանը հետ է կանչում արձանագրությունները Ազգային ժողովից, իսկ 2018 թվականի մարտի 1-ին դադարեցնում է դրանց կնքման ընթացակարգը:

13-ամյա դադարից հետո Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանն ու Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդիպեցին նախորդ տարի Պարահայում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԱԴԱՐԵԼ ԵՆ ՊԱՇՏՈՆԱՎԱՐԵԼ

Բարձրագույն դատական խորհրդի կողմից նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների արդյունքում մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող (այդ թվում՝ կալանավորման միջնորդություններ քննող) 14 դատավորներ դադարել են պաշտոնավարել:

Նրանցից Արմեն Պողոսյանը եւ Սասուն Մխիթարյանը մասնակցել են հատուկ կարգով եւ բարդ ընթացակարգերով անցկացվող որակավորման ստուգման գրավոր փուլին եւ հաղթահարել են այն. եթե նրանց հաջողվի հաղթահարել նաեւ բարեվարքության եւ ԲԴԽ-ում հարցազրույցի փուլերը, ապա կկարողանան վերանշանակվել դատավորի պաշտոնում:

Մյուս 12 դատավորներն ընդգրկվել են ռեզերվային ցուցակում եւ ապագայում հնարավորություն կունենան վերստին նշանակվելու դատավորի պաշտոնում՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելուց հետո կամ այլ հավակնորդների հետ հավասար հիմունքներով մասնակցելով հատուկ կարգով որակավորման ստուգմանը:

«5+1» ՁԵՎԱՉԱՓՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը մեկնել է Մոսկվա՝ մասնակցելու ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների եւ ԵՏՀ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) «5+1» ձեւաչափով հերթական խորհրդակցությանը:

Խորհրդակցության օրակարգում ներառված են նաեւ անդրսահմանային շուկաներում մրցակցային իրավիճակի եւ մրցակցության ընդհանուր կանոնների կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ 2022 թվականի տարեկան հաշվետվության մշակմանը, ԵԱՏՄ իրավունքի մեջ հակամենաշնորհային կոմպլաեանսի ինստիտուտին առնչվող դրույթների ներառմանը, ռիսկի վրա հիմնված մոտեցման կիրառմանն առնչվող եւ այլ հարցեր:

ՎԵՐԱԲԵՆԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը եւ Ագրովերամշակման վարչության պետ Գեւորգ Ղազարյանը հանդիպել են կոնյակ արտադրող առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են կոնյակագործության ոլորտում առկա խնդիրները, հայկական կոնյակի վերաբերենդավորման գործընթացն արագացնելու, միասնական լուծումներ գտնելու եւ լավագույն արդյունքին հասնելու հնարավոր ուղիները:

Հանդիպման մասնակիցները պայմանավորվել են ավելի սերտ համագործակցել այդ գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ԲՂԱՎՈՑՆԵՐ՝ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ալեքսանդր Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2023 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 17:45-ի սահմաններում, գտնվելով «Վաղարշ եւ որդիներ կոնցեռն» ՍՊ ընկերությանը պատկանող Խորենացի 24 հասցում գործող «Ոսկու աշխարհ» տոնավաճառի ստորգետնյա ավտոկայանատեղիում, նկատել է հիշյալ ընկերության տնօրենի անվտանգության գծով օգնականի պաշտոնը զբաղեցնող Վաչագան Մերուժանի Հովհաննիսյանին պատկանող «Նիսսան» մակնիշի ավտոմեքենան եւ մտադրվել է հիշյալ մեքենայից կատարել հափշտակություն. օգտվելով այն հանգամանքից, որ մեքենայի դռները կողպված չեն եղել՝ բացել է մեքենայի սահի դռները եւ նկատել այնտեղ 2 հաս պոլիէթիլենային տոպրակներ, վերցրել է դրանք եւ փորձել դուրս գալ ստորգետնյա ավտոկայանատեղիից:



Այդ պահին Ալեքսանդր Հովհաննիսյանին նկատել է «Վաղարշ եւ որդիներ կոնցեռն» ՍՊ ընկերության հսկիչների ավագ հերթափոխի պետ Էդգար Սահակյանը եւ Վաչագան Հովհաննիսյանի անձնական վարորդ Գեւորգ Նազարյանը: Վերջիններս բղավել են նրա հետեւից, եւ նա կանգնել ու հետ է շրջվել, հարցրել են, թի ինչ է անում, իսկ Ալեքսանդր Հովհաննիսյանը, հասկանալով, որ իր կողմից կատարված հափշտակությունը նկատվել է Էդգար Սահակյանի, Գեւորգ Նազարյանի կողմից եւ անտեսելով այդ հանգամանքը, ստել է վերջիններիս՝ ասելով, թե իր ավտոմեքենայից իրեր է վերցնում. վերջինս այսպես հափշտակել է Վաչագան Հովհաննիսյանին պատկանող, 31.000 ՀՀ դրամ արժողությամբ, 0.7 լիտր տարողունակությամբ մեկ շիշ «Արարատ Դվին» տեսակի 20 տարվա հնեցմամբ կոնյակը՝ իր տուփով, 5.000 ՀՀ դրամ արժողությամբ ճմեռային ռետինե կիսաճտքավոր կոշիկները, 40.000 ՀՀ դրամ արժողությամբ ճմեռային բաժկոնը, ընդհանուր՝ 76.000 ՀՀ դրամ: Բացահայտ հափշտակված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն, սակայն, չի ունեցել իր կամքից անկախ հանգամանքներում, մասնավորապես՝ Էդգար Սահակյանի կողմից հետապնդվելու եւ բռնվելու պատճառով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տվյալների իրացման արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության Մարաշի անձնագրային խմբի քաղաքացիական հատուկ ծառայության առաջին կարգի մասնագետ Ա.Ս-ն եւ նույն խմբի ղեկավար Լ.Հ-ն, հանդիսանալով պաշտոնատար անձինք, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, իրենց ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, մի շարք անձանցից, այդ թվում՝ վերջիններ կամ նրանց մասնակցած անձանց օգտին աղօրինի գործողություն կատարելու համար նշված անձնագրային խմբի վարչական շենքում բազմաթիվ դրվագներով պահանջել եւ ստացել են տարբեր չափերի կաշառք-գումարներ:

ԱԱԾ-ից հայտնում են, որ դեպքերի կապակցությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որը նախաքննություն իրականացնելու նպատակով քննչական ենթակայությամբ ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Բացի այդ, 2023 թվականի փետրվարի 6-ին ՀՀ ԱԱԾ Երեւանի քաղաքային վարչությունում ՀՀ քաղաքացին առերեւույթ հանցանքի մասին հաղորդմամբ հայտնել է, որ նույնականացման քարտ ստանալու նպատակով դիմել է Մարաշի անձնագրային խումբ, որտեղ նույն անձնագրային խմբի աշխատակից Ա.Ս-ն այն տրամադրելու դիմաց իրենից պահանջել է կաշառք-գումար:

2023 թվականի փետրվարի 10-ին իրականացված «Կաշառք ստանալու եւ տալու նմանակում» գաղտնի քննչական գործողության շրջանակներում ՀՀ հիշյալ քաղաքացին քիմիական համապատասխան միջոցներով նախապես մշակված կաշառք-գումարը անձնագրային հիշյալ խմբի վարչական շենքում անձամբ տվել է Ա.Ս-ին, որից հետո վերջինս ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից ձերբակալվել է եւ ներկայացրել է ստացված կաշառք-գումարը:

Դեպքի առթիվ ՀՀ ազգային անվտանգության ծառայության եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ վարութային գործողությունների արդյունքում Ա.Ս-ն եւ Լ.Հ-ն բերման են ենթարկվել եւ ձերբակալվել:

Դատարանի որոշմամբ՝ Լ.Հ-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, իսկ Ա.Ս-ի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց՝ տնային կալանքը: Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են տարաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ եւ վարութային գործողություններ՝ բազմադրվագ դեպքի բոլոր հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՏ ԱՐԱՔԱՆԳ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արթուր Գյուլնազարյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա «Ադջարաբեթ»-ում խաղադրույքներ է կատարել, որի արդյունքում տանուլ է տվել իր եւ ծնողների պահուստից 1600 ԱՄՆ դոլարին համարժեք 668.672 ՀՀ դրամ եւ չի կարողացել վերականգնել տանից վերցրած գումարների չափը: Տան անդամներին մոլորեցնելու համար եւ միաժամանակ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, 2022 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 11:35-ին, զանգահարել է իրավասու մարմին հանդիսացող ՀՀ ոստիկանության ՕԿԿ եւ կատարել իր նկատմամբ ավազակային հարձակում կատարելու վերաբերյալ տեղի չունեցած հանցագործության մասին սուտ մատնություն՝ հայտնելով, որ նույն օրը իրենց տուն է մտել մորուքով անհայտ անձը, դանակ քաշել իր վրա՝ պահանջելով գումար, եւ վերցնելով 2000 ԱՄՆ դոլար՝ դիմել է փախուստի՝ վնասելով ձեռքը:

ՑՈՒՑՄՈՒՆՔ Է ՏՎԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ Այրվածքաբանության կենտրոնում հարցաքննվել է եւ ցուցմունք է տվել հունվարի 19-ին Ազատ գյուղի կացարանում հրդեհից զոհված 15 զինծառայողների մահվան գործով անցնող սպան՝ Եղիշե Հակոբյանը:

Գրել էինք, որ ծնողներից մի քանիսն արդեն հարցաքննվել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ այն, ինչ հրապարակային հայտարարել են ծնողները, նույնը պնդել են նախաքննական մարմնում:

Հիշեցնենք, որ նախաքննական մարմինը 15 զինծառայողների մահվան գործով նշանակել է թմրաբանական փորձաքննություն:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել էր անձամբ տեղեկությունը պարզել ՀՀ քննչական կոմիտեից, որտեղից էլ հաստատել էին. «Այո՛, նշանակված է նման փորձաքննություն, բայց եզրակացությունը դեռ չենք ստացել: Նշանակվել են նաեւ հրդեհատեխնիկական, պայթյունատեխնիկական, նյութագիտական, ճգաբանական, հետքաբանական, շինարարատեխնիկական, ապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի եզրակացությունը եւս չի ստացվել»:

Բանն այն է, որ սպայի եւ մահացած 15 զինվորների հարազատների մոտ կասկածներ կան՝ ինչու մինչ կրակը կհասներ սենյակ, տղաները դուրս չեն եկել այրվող կացարանից եւ փրկել իրենց կյանքը: Անգամ սպան բանավոր ասել է քննիչներին, որ իր համար կասկածելի էր այն երեւույթը, որ երբ ինքը գոռացել, աղաղակել է, թե՝ հրդեհ է, արթնացե՛ք, դո՛ւրս եկեք, տղաները չեն արձագանքել, այսինքն՝ անգիտակից են եղել»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 14-15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՐԴՅՈՒՆՔ ՉԿԱ

2010թ. հուլիսի 29-ին «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունը հաղորդել է՝ Տավուշի մարզպետարանից տեղեկացրել են, որ, շնորհիվ կատարված ներդրումների, բավականին վերականգնողական ու վերակառուցողական աշխատանքներ են իրականացվել մարզի ոռոգման համակարգում, որի արդյունքում Տավուշի մարզում արդեն հնարավոր է ոռոգել ընդհանուր առմամբ 6 հազար 160 հեկտար հողատարածք: Լրագրողական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետարան, թե ներկայումս Տավուշի մարզում որքան են կազմում ոռոգելի հողատարածքները: 2023թ. փետրվարի 9-ին տեղեկատվական հարցումիս մարզպետարանից պատասխանել են, որ մարզի ոռոգելի հողատարածքները, ըստ համայնքների կողմից ներկայացված հաշվետվության, կազմում է 6 հազար 428 հեկտար: Ստացվում է, որ վերջին 13 տարում Տավուշի մարզում ոռոգելի հողատարածքներն ավելացել են ընդամենը 268 հեկտարով: Ամեն տարի , Հայաստանի պետական բյուջեի, միջազգային դոնոր եւ բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ, մարզի ոռոգման համակարգում վերակառուցման, վերանորոգման, ընդլայնման ծրագրեր են իրականացվում. ո՞ւր է այդ աշխատանքների արդյունքը:

ԾԱԽՄԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ ԵՆ

Հայաստանի անկախացումից հետո ավելի քան երեք տասնամյակ Իջեւանի տարածաշրջանի Աճարկուտ եւ Աճարկուտին հարեւան, Ադրբեջանին սահմանակից Կիրանց գյուղի բարձր դասարանցիները ուսումնառության համար ամեն առավոտ մեկնում են Իջեւանի տարածաշրջանի Ներքին Ծաղկավան եւ Սարիգյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցներ: Աճարկուտում եւ Կիրանցում դպրոցները հիմնական են: Տավուշի մարզպետարանից տեղեկացա, որ Հայաստանի պետական բյուջեից փոխհատուցվում է Աճարկուտ եւ Կիրանց գյուղերի ավագ դասարանցիների տրանսպորտային ծախսերը: Աճարկուտ գյուղի բնակիչ ավագ դասարանցիների՝2022 թվականի տրնասպորտային ծախսերի փոխհատուցման գումարը կազմել է 339,7 հազար դրամ, իսկ Կիրանց գյուղի բնակիչ ավագ դասարանցիներինը՝ 450 հազար դրամ: Մարզպետարանից հայտնեցին, որ այժմ ընթացքի մեջ են դպրոցական նոր շենքերի կառուցման աշխատանքները մարզի Կիրանց, Գանձաքար եւ Դովեղ բնակավայրերում: Սպասվում է, որ Կիրանցում դպրոցական նոր շենքի կառուցումից, գործարկումից հետո գյուղի հիմնական դպրոցը կդառնա միջնակարգ, եւ այնտեղ կսովորեն ոչ միայն Կիրանցի, այլեւ Կիրանցի հարեւան Աճարկուտի գյուղի ավագ դասարանցիները:

ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐԸ՝ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ

Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում խմելու ջուրը տրվում է ժամանակացույցով՝ օրական մի քանի ժամ առավոտյան, մի քանի ժամ երեկոյան: Խմելու ջրի պակասը հատկապես զգացվում է քաղաքի վերին՝ Բլբուլյան թաղամասում: Իջեւանի համայնքապետարանից հայտնեցին, որ «Վեոլիա ջուր» ընկերությունը նախատեսում է առաջիկայում նոր ջրագծեր կառուցել, որպեսզի բարելավվի 20 հազար բնակիչ ունեցող Իջեւան քաղաքի ջրամատակարարումը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՑՈՒՑԱՆԻՇ

ՇԻՐԱԿԻ ԵՎ ԼՈՌՈՒ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Անանա Վարդապետյանը փետրվարի 14-ին աշխատանքային այցով եղել է Շիրակի եւ Լոռու մարզերի դատախազություններում՝ ամփոփելու 2022 թվականի գործունեության արդյունքները:

Գլխավոր դատախազի առաջին կանգառը Շիրակի մարզի դատախազությունում է եղել: Մարզի դատախազ Արմեն Չիչոյանը 2022 թվականի գործունեության արդյունքները ներկայացնելիս անդրադարձ է կատարել մարզում գրանցված հանցավորության վիճակին, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքներին եւ դրանց բացահայտման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Մասնավորապես, հանրապետության գլխավոր դատախազին զեկուցվել է, որ հաշվետու ժամանակահատվածում մարզում աճել է բոլոր տեսակի հանցագործությունների թիվը: 2022 թվականին բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 47.5% (2021 թվականի համեմատ՝բացահայտման ցուցանիշը վատթարացել է 20.2%-ով):

Նախորդ տարի Շիրակի մարզում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների 439 դեպք՝72-ով ավելի 2021 թվականի ցուցանիշից: 2022 թվականին արձանագրվել է սպանության 5 դեպք (2021 թվականի համեմատ՝ դեպքերի աճ կամ նվազում տեղի չի ունեցել): 2022 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով կատարվել է ինը ուսումնասիրություն, որից չորս ուսումնասիրության առարկա է ավելի քան 150 անշարժ գույք: 2022 թվականի ընթացքում քննվել է 51 կոռուպցիոն հանցագործության վերաբերյալ վարույթ (2021 թվականին՝112): 2022 թվականին արձանագրվել է կաշառք ստանալու, կաշառք տալու եւ կաշառքի միջնորդության 22 դեպք (2021 թվականին՝37 դեպք):

2022 թվականի ընթացքում Շիրակի մարզի դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործություններով դատարան է ուղարկվել վեց քրեական գործ (վարույթ)՝ 12 անձի վերաբերյալ (2021 թվականին՝ 24 քրեական գործ (վարույթ)՝ 40 անձի վերաբերյալ): Արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում կատարվել է 52 ստուգում եւ ուսումնասիրություն (2021 թվականին՝51), որոնց արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել (2021 թվականին հայտնաբերվել էր 12 խախտում): 2022 թվականի ընթացքում Շիրակի մարզի դատախազությունից դատարան է ուղարկվել 263 քրեական գործ (վարույթ)՝ 298 անձի նկատմամբ (2021 թվականին՝ 243 քրեական գործ (վարույթ)՝ 309 անձի նկատմամբ):

Երկու մարզերի դատախազների կողմից ներկայացված հաշվետվություններում կարեւորվել է Շիրակում եւ Լոռիում պարեկային ծառայության գործունեությունը՝ ուղղված հանցագործությունների բացահայտմանն ու կանխարգելմանը: Գլխավոր դատախազ Վարդապետյանի վերջին կանգառը եղել է Լոռու կայազորի զինվորական դատախազությունում: Հաշվետվության ամփոփմանը ներկա են եղել նաեւ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, զինվորական դատախազ Գրիգոր Էլիզբարյանը, ՀՀ ԶՈՒ 3-րդ բանակային կորպուսի հրամանատար Ալիկ Ցականյանը, ՀՀ ԱԱԾ Լոռու եւ Տավուշի հակահետախուզության բաժնի պետերը, ՀՀ ՊՆ Վանաձորի, Իջեւանի եւ Բերդի ռազմական ոստիկանության բաժնի պետեր Էդիկ Անդրյանը, Մուրադ Մկրտչյանը եւ Էդիկ Սարգսյանը, Պաշտպանության նախարարության զինվորական կոմիսար Սամվել Գեւորգյանը: Լոռու կայազորի զինվորական դատախազ Արման Ապրեսյանը ներկայացրել է 2022 թվականի ամփոփ հաշվետվությունը:

Անդրադարձ է կատարվել զինծառայողի կողմից զորամասում, զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում թմրամիջոց գործածելու կամ օգտագործած վիճակում ծառայության ներկայանալու դեպքերի քննության եւ որակման առանձնահատկություններին: Գլխավոր դատախազը Զինվորական դատախազությանը հանձնարարել է ՊՆ ռազմական ոստիկանության ղեկավար կազմի հետ համագործակցությամբ վերոնշյալ դեպքերի բացահայտման եւ քննության ուղղությամբ մշակել փոխգործակցության արդյունավետ ձեւաչափ:

ՀԱՐՅՈՒՐԱՍՅԱԿԻ ԱՄԵՆԱՍԱՐՍԱՓԵԼԻ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԸ

Հզոր երկրաշարժերը, որոնք մեկ շաբաթ առաջ տեղի են ունեցել Թուրքիայի եւ Սիրիայի տարածքներում, դարձել են Եվրոպայում վերջին հարյուրամյակի ընթացքում ամենաասարսափելի բնական աղետը:

Նման հայտարարություն է արել Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն Հանս Կլյուգեն հայտարարել է. «Մենք դեռ տեղեկանում ենք աղետի չափերի մասին, դրա իրական վնասը հաշվարկված չէ»:

Կլյուգեի խոսքով՝ ավելի քան 35 հազար մահ է հաստատվել Թուրքիայում, իսկ շուրջ 5 հազարը՝Սիրիայում. այդ թիվը շարունակում է աճել: Երկու երկրներում առնվազն 26 միլիոն մարդ հումանիտար օգնության կարիք ունի: ԱՀԿ-ն կոչ է արել 43 միլիոն դոլար հատկացնել երկրաշարժից տուժածներին օգնություն ցուցաբերելու համար եւ, հավանաբար, կխնդրի ավելացնել այդ գումարը: «Ես ակնկալում եմ, որ առաջիկա օրերին, երբ մենք ավելի լավ կհասկանանք ճգնաժամի մասշտաբները եւ հումանիտար կարիքները, այդ գումարը կաճի՝ առնվազն կրկնակի»,- ասել է Կլյուգեն:

Ջրամատակարարման խաթարման եւ աղետի վայրերում տիրող հակասանիտարական պայմանների պատճառով աճում է անհանգստությունը վարակիչ հիվանդությունների տարածման առնչությամբ. նշում է ԱՀԿ-ն: Թուրքական իշխանությունների տվյալների համաձայն, որոնք ներկայացնում է կազմակերպությունը, շուրջ 80 հազար մարդ գտնվում են հիվանդանոցներում, ինչը հսկայական ծանրաբեռնվածություն է առողջապահական համակարգի վրա, որն ինքնին մեծապես տուժել է տարերային աղետի հետեւանքով: «Մեր 75-ամյա պատմության ընթացքում մենք նախաձեռնել ենք շտապ օգնության բրիգադների խոշորագույն տեղակայումը ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանում:

Նրանց նպատակն է փոխարինել ավերված հիվանդանոցները՝ հատուկ ուշադրություն հատկացնելով ծանր վնասվածքներ ստացած հիվանդներին»,- ամփոփել է Հանս Կլյուգեն: 7,7 եւ 7,6 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերը փետրվարի 6-ին ինը ժամ ընդմիջումով տեղի են ունեցել Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Քահրամանմարաշ նահանգում: Ստորգետնյա ցնցումները, որոնց հաջորդել են հարյուրավոր հետցնցումներ, զգացվել են երկրի 10 նահանգներում եւ հարեւան պետություններում: Երկրաշարժից մեծապես տուժել են Թուրքիան եւ Սիրիան:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ջրային ռեսուրսների օգտագործման եւ պահպանության ուղղությամբ 2022թ. իրականացրել է 51 ստուգում, որից 33-ը՝ ՀԷԿ-ում եւ ՓՀԷԿ-ում, 9-ը՝ ջրօգտագործողների ընկերությունում, 9-ը՝ ձկնաբուծարանում:

Տեսչական մարմնից հայտնում են, որ տարեկան ծրագրով 2022թ. կատարողականը կազմում է 100%: Ավարտված 51 ստուգման արդյունքում հայտնաբերվել է 99 իրավախախտման դեպք: Կայացվել է 80 վարչական տույժ նշանակելու մասին որոշում: Որոշումներով նշանակված տուգանքի չափը կազմել է 22.230.000 ՀՀ դրամ: Հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 94.974.872 ՀՀ դրամ:

2022թ. ընթացքում ԲԸՏՄ աշխատակիցների կողմից նաեւ բացահայտվել է առանց համապատասխան ջրօգտագործման թույլտվության առկայության ապօրինի ջրառ իրականացնելու 12 դեպք, որոնց գործողությունն անմիջապես կասեցվել է (սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվություն ձեռք բերելուց հետո 2-ի կասեցումը հանվել է):

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

ՀՀ քննչական կոմիտեում ամփոփվել է 2022թ. ընթացքում ընտանեկան բռնության վերաբերյալ քննված քրեական վարույթների ընդհանուր շարժընթացը:

Մասնավորապես, 2022թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 960 քրեական վարույթ: Նշվածներից 122-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ եւ 126 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 301 քրեական վարույթ կարճվել է, որից 150-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 151-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով: 383 քրեական վարույթ փոխանցվել է 2023թ. հունվար ամիս: Դատարան ուղարկված վարույթներից՝

-9-ը եղել է սպանության,

-1-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու,

-3-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու,

-1-ը՝ մարդուն առեւանգելու,

- 1-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների,

-2-ը՝ 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու,

-5-ը՝ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու,

-25-ը՝ ֆիզիկական ներգործության,

-3-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու,

-1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի եւ երեխայի միջեւ տեսակցության իրականացմանը խոչընդոտելու,

-3-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու,

-68-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված վարույթներով 125 մեղադրյալներից 108-ը հանդիսացել են ամուսիններ, 4-ը՝տատ կամ պապ, 5-ը՝ քույր կամ եղբայր, 8-ը՝զավակ կամ թոռ: 125 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով քրեական հետապնդում չի իրականացվել, կամ դադարեցվել է քրեական հետապնդումը:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԴԱՀՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

2022 թվականի մարտ ամսից «Հանուն չորրորդ իշխանության» հկ-ն տեղեկատվական դաշտում իրականացնում է մշտադիտարկում, որով յուրաքանչյուր ամիս ամփոփվում են լրագրողական դաշտում արձանագրված խախտումներն ու կարեւոր իրադարձությունները: Հերթական մշտադիտարկման արդյունքները վերաբերում են 2023 թվականի հունվար ամսին: Եւ այսպես՝

պետական գերատեսչության կողմից թերացում՝ տեղեկատվության տրամադրման/հաստատման հարցում:

Հունվարի 6-ին լուր տարածվեց, որ հրետակոծել են Սյունիքի մարզում գտնվող «Ա.Ա.Բ պրոյեկտ» ընկերության ասֆալտի գործարանը: Միջադեպի աղբյուրը Aravot.am կայքն էր: Պաշտոնական գերատեսչությունները՝ ՊՆ, ԱԻՆ, ոչ մի կերպ չարձագանքեցին լուրին:

Կանխակալ վերաբերմունք ընդդիմադիր լրատվամիջոցների նկատմամբ

Հունվարի 10-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասուլիս էր կազմակերպել ՋԼՄ-ների հարցերին պատասխանելու նպատակով: Մի շարք ընդդիմադիր լրատվամիջոցների լրագրողներ ասուլիսին հրավիրված չէին: Պատճառը պարզելու նրանց զանգերը կառավարություն մնացել են անպատասխան:

Հրապարակման համար լրատվամիջոցի նկատմամբ ճնշումների փորձ

Հունվարի 20-ին TV5 հեռուստաալիքը հրապարակեց հունվարի 19-ին ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորական վաշտի կացարանի հրդեհի կադրերը: Վերոհիշյալ լրատվամիջոցի YouTube-յան էջում տեսանյութը դրված էր առանց փոփոխությունների, որտեղ լսվում էին գոռգոռոցներ: Հեռուստաալիքի այդ հրապարակումն արժանացավ հասարակության խիստ դժգոհությանը, անգամ եղան մարդիկ, որ դիմեցին ՀՌԱՀ ալիքը փակելու համար:

Սակայն հունվարի 21-ին ՀՌԱՀ նախագահ Տիգրան Հակոբյանը հայտնեց, որ եթերում ցուցադրվել է հրդեհի «համր» տեսանյութը, որտեղ չկան այրվող մարմիններ, դաժան կադրեր, ողբերգության բաց տեսարաններ: Օրենքով YouTube-յան հեռարձակումը ՀՌՀ կարգավորումից դուրս է:

Լրագրողների գործունեության խաթարման եւ անձնական վիրավորանքի փորձեր

Հունվարի 28-ին Եռաբլուրում լրագրողների հարցերին հրաժարվել է պատասխանել ՊՆ բարձրաստիճան զինվորականությունը: ԳՇ պետը, ինչպես նաեւ ԵԿՄ ղեկավար Սասուն Միքայելյանը բղավեցին տեղում աշխատող լրագրողների վրա: Հավելենք, որ բազմաթիվ են դեպքերը, երբ իշխող ՔՊ կուսակցության ներկայացուցիչները բավական կոպիտ են արձագանքում լրագրողների հարցերին:

-Հանրային հեռարձակման եթերից զրկելու վերաբերկալ «Երկիր Մեդիայի» հայցը վարույթ է ընդունվել, բայց միջնորդությունը՝ մերժվել: Եթերը մինչեւ դատավարության ավարտն անջատված կմնա: Հիշեցնենք, որ 2022 թվականի դեկտեմբերի 2-ին Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովում որոշում կայացվեց «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությանը զրկել հանրապետական սփռման արտոնագրից:

-Արձանագրենք, որ Ազատ գյուղի զինվորական կացարանի հրդեհի տարածքում դրոնից լուսանկարներ հաջողվեց անել միայն fip.az փաստերի ստուգման հարթակին, որը հրապարակեց՝ «Ազատ գյուղի «զորամասը» միակը չէ. ինչ պայմաններում են ծառայում սահմանապահ զինվորները» վերլուծական նյութը: Armlur, Factor, Mediahub լրատվամիջոցների լրագրողներ տեղից հրապարակեցին հարցազրույցներ:

-Հունվար ամսվա ընթացքում լրագրողների նկատմամբ բռնության դեպքեր չեն արձանագրվել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ախուրյանի խճուղի, 1/1 շենք, 22 հասցեում գտնվող 106,17 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24400000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 06.03.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիէսԹի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչ– 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

«ԶՈՒԼԱԼԻ» ՖԻԼՄԸ՝ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

Փետրվարի 7-ից 12-ը Ֆրանսիայում կայացած «Նանտի» միջազգային կինոփառատոնի (Univercinn Nantes) շրջանակում ցուցադրված ռեժիսոր Հայկ Օրդյանի «Զուլալի» լիամետրաժ ֆիլմն արժանացել է «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին (1er Prix du Public):

Փառատոնի պաշտոնական էջում ասվում է. «Երեկ երեկոյան ուրախությամբ հայտարարեցինք, որ ձեր սիրելի ֆիլմը Հայկ Օրդյանի «Զուլալին» է»:

Փառատոնի մրցանակակիր է համարվել ընդամենը երկու ֆիլմ, որոնցից մեկը «Զուլալի»-ն է: Փառատոնի գլխավոր պաստառին հենց «Զուլալի»-ն է պատկերված:

«Զուլալի» երեք մասից բաղկացած պատումը բացահայտում է ընտանեկան մեծ ողբերգությունը: Մենակության զգացումով մարդիկ մենակ չեն հեռավոր գյուղում եւ միասին են հաղթահարում ցավն ու տանջանքը՝ տարածելով սեր եւ չկորցնելով հույսը վաղվա օրվա հանդեպ: Գյուղում ապրում է մի ընտանիք՝ տարեց տանտիկինը, տղան՝ Նազարոսը, եւ նրա մայրը՝ Զուլալին: Փոքրիկ Նազարոսը մտածում է տարօրինակ Զուլալիի, մինչեւ հարյուր տարեկան չապրած պապու եւ այլ հարցերի մասին:

Հիշեցնենք, որ ռեժիսոր Հայկ Օրդյանի «Զուլալի» ֆիլմը Սանկտ Պետերբուրգում մրցանակի է արժանացել. մրցանակը ստացել է դերասանուհի Մարինե Պետրոսյանը՝ արժանանալով լավագույն դերասանուհու կոչմանը: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացավ ֆիլմի ֆեյսբուքյան պաշտոնական էջից:

«Մարինե Պետրոսյանը՝ լավագույն դերասանուհի. «Զուլալիի» հաղթարշավը շարունակվում է: «Զուլալի» ֆիլմում Աքիրի դերը լավագույնս ներկայացնելու համար Մարինե Պետրոսյանը ք. Գատչինայի (Ս.Պետերբուրգ) «Գրականություն եւ կինո» («Литература у кино») XVIII միջազգային կինոփառատոնում ստացել է լավագույն դերասանուհի մրցանակը»,- գրված է հրապարակմանը կից:

Ավելի վաղ հայտնել էինք, որ մրցանակի էր արժանացել ֆիլմում Զուլալիին մարմնավորող Հերմինե Ստեփանյանը՝ Սալենտոյի միջազգային կինոփառատոնում Զուլալիի դերակատարման համար ստանալով լավագույն դերասանուհի մրցանակը:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի հետ զրույցում դերասանուհին հայտնել էր՝ ֆիլմի երաժշտությունը գրել է հայ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, եւ հենց «Զուլալիի» առանձնահատկություններից է այն, որ Տիգրան Մանսուրյանը ավելի քան 30 տարվա դադարից հետո կինոերաժշտություն է գրել հենց այս ֆիլմի համար:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

«ՈՒԶՈՒՄ ԵՄ ԿՅԱՆՔՍ ԵՐԿԱՐԱՑՆԵԼ». ԱՐՏԱՇ ԱՍԱՏՐՅԱՆ

«Ուզում եմ դարձաբանել, որ առողջ եմ, Փառք Աստծո, եւ իմ ցանկությամբ եմ նիհարել եւ շարունակելու եմ նիհարել, որ կարողանամ սիրուն ու թեթեւ աշխատանքներ իրականացնել՝ ծավալելով գործունեությունս: Ուզում եմ կյանքս երկարացնել, որ կարողանամ ծառայել եւ ուրախացնել ձեզ»,- «Ինստագրամ»-ի ուղիղ եթերում նշել է երգիչ Արտաշ Ասատրյանը՝ անդրադառնալով նկատելի քաշի կորստին եւ հանրության արձագանքին:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ արդեն մի քանի օր է, ինչ համացանցում քննարկում են երգիչ Արտաշ Ասատրյանի մասնակցությունը եղբոր՝ Տիգրան Ասատրյանի որդու՝ Արամ Ասատրյանի հարսանիքին:

Հանրության աչքից չէր վրիպել նաեւ Արտաշ Ասատրյանի արտաքին տեսքը, որտեղ ակնհայտ երեւում է, թե ինչպես է երգիչը նիհարել եւ գեղեցիկ կազմվածք ձեռք բերել:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿՈՄԱ

Գեղասահքի օլիմպիական չեմպիոն (պարային զույգեր) Ռոման Կոստոմարովի առողջական վիճակը ծայրահեղ ծանր է: Ինքնուրույն շնչել նա չի կարողանում: Երեկ ռուսաստանցի գեղասահորդը եղել է արհեստական կոմայի մեջ : Ֆիբրոզների մեծ քանակի հետեւանքով մտավախություն կա, որ Կոստոմարովի կյանքը փրկել չի հաջողվի:

Կոստոմարովը հոսպիտալացվել էր հունվարի 10-ին երկկողմանի ծանր թոքաբորբով: Տեւական ժամանակ արհեստական շնչառության եւ արյունը թթվածնով սնուցելու սարքերին միացված լինելու հետեւանքով խախտվել էր մարզիկի պերիֆերիկ արյունաշրջանառությունը, զարգացել էին վերջույթների նեկրոզներ, որոնց հետեւանքով անդամահատել են նրա ոտնաթաթերը եւ ձեռքերի մի քանի մատը:

Կոստոմարովը 46 տարեկան է, օլիմպիական ոսկե մեդալը նվաճել է 2006թ. Թուրինի խաղերում Տատյանա Նավկայի հետ: 2006թ.-ին էլ Կոստոմարովն ավարտեց մարզական կարիերան, սակայն հանդես էր գալիս ցուցադրական ծրագրերով:

ՅՈԹԵՐՈՐԴ ԵՐԵԽԱՆ

Վալենտինի օրը երգիչ եւ դերասան Մարկ Էնթոնին ու նրա կինը՝Նադյա Ֆերեյրան, հայտարարել են, որ սպասում են իրենց առաջնեկին: Մարկի համար սա յոթերորդն է: 54-ամյա երգիչը եւ նրա չորրորդ կինը, ով ընդամենը 23 տարեկան է, կիսվել են ուրախալի լուրով՝ հրապարակելով Նադյայի որովայնի լուսանկարը: «Վալենտինի օրվա լավագույն նվերը, - գրել է նա՝ իսպաներեն ավելացնելով: -Շնորհակալություն Աստծուն այս մեծ օրհնության համար»: Հղիության մասին հայտարարությունը հրապարակվել է նրանց ամուսնությունից ընդամենը երկու շաբաթ անց: Հարսանեկան շքեղ արարողությունը տեղի է ունեցել Մայամիում հունվարի 28-ին:

ԿՄԵԿՆԵՆ ՄՅՈՒՆԽԵՆ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 24-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն հույս է հայտնել, որ Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի պատասխան խաղում կկարողանան պարտության մատնել Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիային» եւ դուրս գալ քառորդ եզրափակիչ: Փարիզում տեղի ունեցած առաջին խաղում 1:0 հաշվով հաղթել է «Բավարիան»: Մբապեն փոխարինման էր դուրս եկել երկրորդ խաղակեսում եւ խփել երկու գոլ, սակայն երկու դեպքում էլ գրանցվել էր խաղից դուրս վիճակ: «Պետք է ավելի արագ խաղանք եւ օգտագործենք մեր պահերը: Մյունխեն կմեկնենք հաջորդ փուլ դուրս գալու նպատակով եւ վճռականությամբ: Մեր խաղացողները պետք է լինեն գերազանց մարզավիճակում: Բոլորը պետք է ճիշտ սնվեն եւ լավ քնեն: Երբ մենք խաղում ենք հարձակողական ֆուտբոլ, մրցակիցները լուրջ խնդիրներ են ունենում»,-ասել է Մբապեն:

«Բավարիա» - ՊՍԺ պատասխան հանդիպումը Մյունխենում տեղի կունենա մարտի 8-ին:

● *Փետրվարի 17-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կալիֆորնիական սյուիտ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բուժհասատաությունը գումար է պահանջում, բայց ես փող չունեմ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:
Մայիս Մարգարյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետության կողմից անվճար բուժօգնություն տրամադրվում է առաջնային բուժօգնության դեպքում, եւ երբ այդ բուժօգնությունն ընդգրկված է պետական ծրագրերի մեջ՝ որպես պետության կողմից փոխհատուցվող բժշկական օգնության տեսակ: Անվճար բուժօգնության դեպքում բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաեւ բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալիս յուրաքանչյուր անձ իրավունք ունի ընտրել բժշկական հաստատությունը եւ իր բժշկին, ստանալ բժշկական օգնություն եւ սպասարկում հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում, պահանջել եւ ստանալ իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման եւ բուժման ընթացքի մասին տեղեկություններ, պահանջել դրանց գաղտնիության ապահովում, իրազեկ լինել իր հիվանդության մասին եւ համաձայնություն տալ իրեն բուժելու հարցում, արժանանալ հարգալից վերաբերմունքի:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր ոք, անկախ իր գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունք: Այս իրավունքը ներառում է անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալը պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Այնուամենայնիվ, պետք է իմանալ, որ Հայաստանի Հանրապետությունում, օրենքով սահմանված կարգով, անվճար բուժօգնությունը սահմանվում է հատուկ խմբերի համար, ինչպես նաեւ հատուկ դեպքերում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որքան եմ պարտք բանկին, բայց ինձ ուղղորդում են իրավաբանների մոտ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:
Սեդա Հայրապետյան (21 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման դեպքում կարող եք հետեւել բանկի տվյալ աշխատակցի ուղղորդմանը եւ այցելել այն բանկ, որտեղ առկա են Ձեր պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տվյալներ: Եթե բանկից առհասարակ հրաժարվում են Ձեր պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, ապա կարող եք ձեռնարկել հետեւյալ քայլերից որեւէ մեկը՝

-դիմել ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ներկայացնելով Ձեր խնդիրը բանկի հետ, եւ խնդրել նրանց միջամտությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ծառայություններն անվճար են:

-Այցելել «ԱՌՔԱ» վարկային բյուրոյի կայքը եւ գրանցվել կայքում: Կայքում գրանցվելուց հետո Դուք հնարավորություն կստանաք ցանկացած պահի մուտք գործել կայքում բացված Ձեր անձնական էջ եւ ստանալ ամբողջական տեղեկատվություն Ձեր վարկային պատմության վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացու՝ բանկի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ոչ բոլոր մասնաճյուղերում, կամ ոչ բոլոր մասնաճյուղերի աշխատակիցները կարող են հասանելիություն ունենալ տվյալների այդ բազային, այդ պատճառով բանկի տվյալ մասնաճյուղի աշխատակիցը կարող է Ձեզ ուղղորդել այն մասնաճյուղ կամ այն աշխատակցի մոտ, որը տիրապետում է այդ տեղեկություններին կամ հասանելիություն ունի տվյալների համակարգին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Աշխարհն ամեն տարի՝ փետրվարի 15-ին, նշում է որպես մանկական քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օր, բայց փետրվարի 15-ն արդեն հուսահատության օր չէ, այլ հույսի: Օրվա խորհուրդն է աջակցել քաղցկեղ ունեցող երեխաներին եւ դեռահասներին, նրանց ընտանիքներին, բարձրացնել մանկական քաղցկեղի մասին իրազեկությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: